«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-101-29.11.2021-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է տարրական հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին՝ անկախ իրենց կազմակերպական-իրավական ձևից, առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետական բյուջեի հաշվին անվճար տրամադրել տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքեր:

Նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է 1-ին հոդվածից հանել՝

1) «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, իսկ «կետը» բառը փոխարինել «մասը» բառով.

2) «անկախ իրենց կազմակերպական-իրավական ձևից» բառերը, քանի որ առաջարկվող ձևակերպմամբ՝ «տարրական հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ» բառերից ակնհայտ է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով անվճար ապահովումը վերաբերում է ինչպես պետական, այնպես էլ՝ ոչ պետական ուսումնական հաստատություններին:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկում ենք 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ դասարանների սովորողներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրով նախատեսված դասագրքերով:»: